

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

Երկու քիւր մէկ ծաւարով

Տարեկան 14 Ֆր.

Վեցամսեայ 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոյար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԵԻԿ

Մա՛նցման տողը

20 սանթիմ

ՀԱՍՑ

Rédaction du Journal

«gravouk»

VAKNA (8u parie

Редакция


на ВѢСТНИКЪ

«Вр вунк»

ВАРНА

Գրութիւնք եւ լին

ս բոշիր



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՐԱՔԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՈՒՋԷՔ ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ ԵՒԱ-
ԽՈՏ ԵՒԵԼ ԽՆԴԻՆԵՔ ԱՄԵՆ
ՏԵՂ Մ. ԹՈՎՄԱՍԵԱՆ ԵՒ ԸՆԿԻ
ԵՒԱԽՈՏ ԳԼԱՆԻԿՆԵՐԸ .

ԿԵՂԵՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Այսօր կը հաւաքուի — Եթէ
վերջին պահուն չէ յետաձգուած
— էջմիածնայ Կեղերոնական Ժո-
ղովը Կաթողիկոսին կոնդակնե-
րուն հիման վրայ .

Կովկասահայոց համար զուտ
սեպական հանգամանք ունեցող
կրթական հարցերու և ազգային
կամ և կեանքական կալուածոց
մատակարարութեան խնդիրնե-
րով պիտի զբաղէր այդ ժողովը .
բայց այժմ կը տեսնենք թէ ե-
կեղեցական համագումարի մը Ի-
րաւունքները վայելել կը միտին
նոյն ժողովին պատգամաւորներ
ընտրող պատուիրակները իրենց
վիճակային խորհրդակցութիւն-
ներուն մէջ . Անոնք կուզեն Հա-
յաստանեայց եկեղեցւոյ կարգե-
րը ու կանոնները փոփոխել ու
կրճատել .

Հայ ազգին ամբողջութիւնը
ներկայացնող Հայ եկեղեցւոյ
զարաւոր կարգերու ու կանոն-
ներու փոփոխութիւնը բնակա-
նաբար նոյն ազգի ամբողջու-
թեան փոխանորդութիւնը վայել-
լոյ լիազօր պատգամաւորներու
համագումար մը միայն կրնայ
վճռել . մինչդեռ էջմիածին գու-
մարուող Կելր. Ժողովը բոլորովին
չուրկ է այդ ձեռնհասութենէն .
քանի որ ինք, այդ Կեղր. Ժո-
ղովը, Հայ ազգի կեսէն պակաս
մէկ հատուածին անունովը մի-
այն կուգայ .

Այդ ժողովը հրաւիրող ու հրա-
հանող Ամենայն Հայոց Կաթո-
ղիկոսը, վստահ ենք թէ, կը
բաղձայ Հայաստանեայց եկեղեց-
ւոյ միութիւնը պահպանել . նոյն-
պէս Կովկասի սահմաններէն
դուրս գտնուող Հայ ազգի մեծա-
մասնութիւնը այդ նախանձախնդ-
րութեամբ երբէք չը ներքու ու չը
թույլադրէր որ ազգին մէկ հատ-

ուածը ամբողջ հայութեան վե-
րաբերող էն նուիրական հաստա-
տութեան հիմնաւոր հետ խաղայ
իւր ուղած ձեւովը .

Այս առիթը իբր մեր բողոքը
հոս արձանագրելէ անմիջապէս
յետոյ, կուգանք սա ևս աւելցնել
թէ էջմիածնայ Կեղր. Ժողովին
համար ընտրուած պատգամաւոր-
ները Հայ ազգի ամբողջութիւնը
չը ներկայացնելէ զատ, Կովկա-
սի հայութեան ալ օրինաւոր
ընտրեալները չեն կարող նկատ-
ուիլ մեծաւ մասամբ . քանի որ
հոն կատարուած ընտրութիւննե-
րը ընդունուած սովորութիւն-
ներու հակառակ և ապօրինի
կերպով եղած են . Այդ ապօրե-
նութիւններէն մէկ քանին թու-
ւենք հոս .

1) Ընտրողներու անթերի ցու-
ցակներ պատրաստուած չըլլալով
անչափահաս աղջիկներ ու աղաք-
ներ քուէ տուած են .

2) Որոշ կուսակցութիւն մը
ճնշումի և սպառնալիքի տակ
քուէաթուղթեր բաժնած է, և
իր տուած թուղթերուն նոյ-
նութեամբ քուէատուիլը ձգուիլը
ապահովելու համար տուիւն
չուրջ իրեն զինուորները սպա-
ցուցած և այլևայլ միջոցներով
քուէարկուներու ձայնի ու կամ-
քի ազատութիւնը բռնաբարած է
կիները, տղաքները և նոյն իսկ
չափահաս այրերը վախցնելով .

3) Գունասուր քուէթուղթե-
րով կատարուած են ընտրու-
թիւնները ճիշդ այն նպատակաւ
որ քուէարկուն չկրնայ փոխել
անմիջապէս իր թուղթը՝ հսկող
կուսակցական զինուորներու հե-
տաքքորութենէն վախնալով .

Այս և ասոնց նման կատար-
ուած ապօրինութիւններ ու զեղ-
ծութիւնք իրաւունք կուտան բո-
լոր, թէ այսօրեւ էջմիածին գու-
մարուող Կեղր. Ժողովի անդամ-
ները ընդհանուր հայութեան
կամքը ու ձայնը չը ներկայաց-
նելէ զատ, անոր մէկ հատուածին
Կովկասահայութեան, ալ օրինա-
ւոր կամքը չեն ներկայացներ . և
հետեւաբար այդ ժողովը հիմնա-
պէս հակազդային է և անձեռն-
հաս ընդհանուր ազգին ու մանա-

ւանդ Հայ եկեղեցւոյն վերաբե-
րող խնդիրներ վճռելու .

Եւ թող ներուի մեզ այժմէն
յայտարարել թէ վեհ. Հայրիկը
անձնապէս պատասխանատու է
անկէ յառաջ գալիք չարիքնե-
րուն համար, որոնք անխուսա-
փելի ըլլալ կը թուին, եթէ ինք
վերջին պահուն սթափելով, ա-
նոնց առջեւ չառնէ .

Թէ ի՞նչ կը հրահանգեն կու-
սակցական դարձուածքներով
ընտրուած պատուիրակները ի-
րենց պատգամաւորներուն . Ահա
իբր միայն հոս ցոյց կուտանք
մեր ընթերցողներուն Ասորա-
խանի վիճակին պատուիրակներու
ժողովին որոշումները .

1. Ընդունել քառադամ ընտրողա-
կան սկզբունք .

2. Դիտական ժողովներ զինուոր-
ութեան խնդիրը, վերաբերեալ ժո-
ղովականներ թիւն . թողնել տեղական
հայ ծխական համայնքներ վճռին .

3. Մի պատգամաւոր ընտրելու հա-
մար կոնդակի 20,000 թիւը իջեցնել
5-10,000, ինկատի ունենալով զանա-
զան վայրերի առանձնապատկ կարիք-
ները .

4. Տարրական ուսումը դարձնել ձրի
և պարտադիր . Հիմնել դպրոցական
ֆոնդ եւ այդ ֆոնդի համար ծխական
տուրք . Ժողովրդի կրթութեան գործը
ժողովրդին յանձնել միմիայն, հետա-
ցնելով հոգեւորականներին .

5. Հիմնել տարրական, աշխարհիկ
միջնակարգ, արհեստագիտական դըպ-
րոցներ և ուսուցչանոցներ . Դպրոցա-
կան լեզուն դարձնել աշխարհաբարը,
զբաւար վերապահելով մասնագիտական
դպրոցներին .

6. Դպրոցական ինքնավարութիւն
և կենտրոնական ուսումնական խոր-
հուրդ, որից կախած կը լինի ուսու-
ցիչներ մատակարարելը, ուսուցիչների
չափը որոշելը, ուսումնական շրջան,
ների բաժանումը, վերահսկող տեսուչ-
ներ ուղարկելը եւ այլն .

7. Խզճի ազատութիւն . եկեղեցու
անջատումը ժողովրդից .

8. Եկեղեցական կայքերի համայնա-
ցում . հակառակ դէպքում ժողովրդա-
կան լայն միջամտութիւն և կառա-
վարութիւն եկեղեցական ստացուածք-
ների .

9. Կուսակցուն հոգեւորականութիւնը
զրկել այն արտօնութիւններից, որոնք
վերապահված են միմիայն նրան . յայտնի
չի . թիւն . առաջնորդութիւն, սինգլի

անդամութեան կաթողիկոսութիւն) այդ
պաշտօնների համար ընտրվելու իրա-
ւունք տալ հաւասարապէս թէ կուսակ-
րուն եւ թէ աշխարհիկ հոգեւորականու-
թեանը .

10. Աշխարհիկ հոգեւորականութեան
համար ուսուցիչ սահմանել, վերացնելով
դանազան կամաւոր տուրքերը, գան-
ձանակները եւ այլն, եւ այդ նպատակ-
ների համար եկեղեցիներում սահմանել
տեղական ֆոնդեր, երեցփոխների եւ
ծխական հոգաբարձուների հոգապետու-
թեան ներքոյ .

11. Վերացնել հոգեւորականներին
պարգեւատրելու սխտեմը .

12. Քահանաներին տեղափոխելու
ազատութիւն տալ եւ ընդհակառակը
ծխին իրաւունք տալ հոգաբարձու իր
քահանային, անհամապատասխան լինե-
լու դէպքում .

13. Հոգեւորական տարազը (ֆարաջ)
գործածել միայն պաշտօնավարութեան
միջոցին .

14. Այրի հոգեւորականներին ա-
մուսնանալու իրաւունք տալ ամենա-
լայն մասով .

15. Վերջ տալ հոգեւոր վարչական
հիմնականութիւններին (սինդ, կոնսիստո-
րիա, հոգ. կառավարութիւն) . Դրա տեղ
սահմանել կենտրոնական կրօնական
համազգային խորհուրդ՝ էջմիածնում եւ
թեմերում՝ առաջնորդական դիւանա-
տներ .

16. Ներկայ 6 թեմի թիւը բազմաց-
նել համեմատ տեղական կարիքների .

17. Դիւանները ամուսնալուծու-
թեան պայմանները, Բողոքովին խնամե-
ական եւ կնքահայրական չհասութիւն-
ները, Փոքրացնել արիւնակցութեան
աստիճանները .

18. Հայ եկեղեցին հասցնել իր
նախնական առաքելական պարզու-
թեան ծխական եւ եկեղեցական
աւանդութիւնների նկատմամբ, աչ-
քի առաջ ունենալով նաեւ ժողովրդի
առողջապահութիւնը (կրճատել Մաշ-
տոցը, աւելորդ ներմուծված երգերն ու
չարականները, հետացնել բոլորեւն
պատկերները, յատուկել եկեղեցիները,
նստաբաններ զենել եւ այլն) .

19. Վերացնել գրաբարի գործածու-
թիւնը եկեղեցում .

20. Կրօնի ուսուցումը հայ եւ պե-
տական դպրոցներում կամաւոր դար-
ձնել .

21. Հարկը պահանջելու դէպքում
էջմիածնում հրաւիրել ընդհանուր հա-
մազգային ժողով առանց դաւանութեան
խտրութեան .

22. Օգոստոսի 15-ի էջմիածնի
համագումարում պահանջել ընդհանուր
պետական սահմանադիր ժողով .

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Էջմիածնէ օգոստոս 4 ին հիւսիս-
րած է կաթողիկոսի դիւանապետը
թէ պատկաճութեամբ հակառակ
զովը օգոստոս 15 ին պիտի սկսի:

— Զօրավար Կօրյայպով Շուշին
խաղաղեցնելով, հիմակ զբաղած
է գաւառները խաղաղեցնելու:
Զիվանշիր գաւառին մէջ զօրքին
և թուրքերու միջև երկար կռիւ-
ներ տեղի ունեցած են: Զօրքերէն
ալ կորուստ կայ, բայց թուրքե-
րու կորուստը խիստ մեծ է եղեր:
Գաղափար թերթը կըսէ թէ թուրք
գիւղերէն կրկին յարձակումի կը
սպասուի:

Թուրքերը անդադար Հայերու
դէմ զրպարտութիւններ կընեն,
սրպէսզի զօրքը հայ գիւղերն ալ
ուժակոծէ: Բայց կատարուած
քննութիւններէն թուրքերուն
ստախոսութիւնները հաստատուե-
լով, զօրքերը հայերու հանդէպ
աւելի բարեկամաբար կը վար-
ուին:

— Աղէքսանտրապօլի կարկու-
տէ փաստուած գիւղերու կորուս-
տը 240,000 ռուպլի կը հաշ-
ուեն:

— Մօսկուայի հայ վաճառա-
կանները իմանալով թէ՛ Նուխի
մահմադարաններն Շուշիի դէպ-
քերէն ազդուած յուզում առաջ
պիտի բերեն, դիմեր են Կով-
կասի փոխարքային, խնդրելով
որ իր ազդեցութիւնը ի գործ
դնէ դժբաղդ պատահարներու
առաջը առնելու համար: Երով-
հետեւ Մօսկուայի հայ վաճառա-
կանները առեւտրական կապեր
ունեն Նուխիի հետ:

— Թուրքերը քշած տարած
են Բարաքաշանցիներու տաւարը:
այրած են հայ գործարանու: Գօ-
րիսի դուրսիւնը սպառնալից է:

Ա. ԵՐԵՎԱՆԵԱՆ

ԱՒԱԶԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՆՅԵՇԱՏԱԿ ԳԵՐԵՋՄԱՆ ՄԸ:

(Շար. նախորդ թիւէն)

— Այն, երկու օր է շատ մտառա-
նութիւններ քաշեցի, Աւազակապետ,
միջոցեց Միւր Սիւպար: Ուր գացիր...
ուր անցուցիր գիշերը:

— Ինչու կը զարմանաս, սիրելի
Միւր Սիւպար, նկատել տուաւ Աւա-
զակապետը: Միթէ՞ չ'ես գիտեր թէ՛
ամենէ՛ն ապահով, ամենէ՛ն հանգիստ
ու ամենէ՛ն խաղաղիկ վայրը բնութեան

ՅԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Վա-

Պուկարահայ ուսուցիչներու մէկ
մասը գոռուած գոչումով եկաւ լեցուե-
ցաւ Վառնա. կազմելու համար սեն-
տեքա մը, որուն նպատակը պիտի լի-
նի, զխաւորարար, իրենց շահերը
պաշտպանել, իրենց անկեալ պատիւն
ու վարկը բարձրացնել, եւ ծրագիր ու
կանոնագիր պատրաստել:

Հարկ է բնի թէ այս ուսուցչական
սենտեքական կազմելու համար ժողովուր-
դին քսակին գիմուեցաւ ճանապար-
հածախս հայթայթելու համար, այն
ժողովուրդի, որուն քսակը տարին
միջանի տասնեակ անգամ կը բացուի
այլ եւ այլ նուազ կամ առաւել բա-
րեգործական ու ազգասիրական նպա-
տակներու համար: Փակագծի մէջ կա-
րելի էր աւելցնել, թէ ինչու դերձակ-
ները, կոչկակարները եւ այլն տրոհե-
տաւորները նման սենտեքական կազ-
մելու համար յարգող հասարակութեան
բարեսիրութեան քիչ մ'ալ ողորմու-
թեան չ'են դիմեր, քանի որ իրենք
ալ իրենց ապագան բարեկեցութեան համար
դրամի պէտք ունին, եւ միթէ վերջի-
ները աւելի հարուստ են քան առա-
ջինները (մենք նկատի ունինք այն
աշխատատեղերը, որոնք օրէ կ'աշ-
խատեն օրէ կ'ուտեն):

Լրագրութեան միջոցաւ յայտնուած
մի քանի որոշումներու մէջ տեսանք
թէ ինչպէս կազմուած է ուսուցչա-
կան միութեան պիւտեճէն: Ամէն տա-
րի 800 ֆր. ի բնու մը եւս աւելցուցած
են ժողովուրդին ուսին. ուրեմն կը
պարտաւորեցնեն ժողովուրդը ամեն տա-
րի 800 ֆր. մը ողորմութիւն ընել ի-
րենց, որուն փոխարեն կը խոստանան
բարեգործ ծառայութիւն մատուցանել
ազգին, կրթելով ազգին գաւազները
լաւ մշակուած ծրագրով եւ դարա-
վերջիկ մէթոտներով: Մեթոտներուն
համար միւր բերանը չը բացուի բան
մ'ընելու, քանի որ այս առաձգական
մէթոտներէն հասարակ մահկանացու-
ները բան չ'են հասկնար: Սա ծրագի-
րը կազմելու համար գոնէ հրաւեր մը
չը լինէ՞ր հասարակութեան գիտակից
մասին. բայց կերելի թէ ուսուցչական
սենտեքական այսպիսի հրաւեր մը չ'է ը-
րած հաստատ գիտնալով որ մեր մէջ
չկրնար գտնուիլ մէկը որ կարենայ
այսպիսի բարձր ծրագիրներ կազմելու
խելք հասցունել, Բայց ո՞ր ազգային
իշխանութիւնը ասոնց յանձնեց ծրա-

ծոցն է ինծի համար: Ատո՞ր վրայ ալ
պիտի մտածենք: Այն այս գիշերը
Վանականին գերեզմանին քով անցու-
ցի...

— Վանականին... ընդհատեց Մի-
րո Սիւպար:

— Այո՛:

— Բայց ուսկի՞ց գիտէիր թէ Վանա-
կանին գերեզմանն ուր է, գանի որ
քար մ'անգամ չ'է տեղեւած անոր վը-
րայ եւ անյիշատակ մեռելներու պէս
մէկ անկիւնը թաղուած է:

Աւազակապետը պատմեց՝ թէ ինչ
պէ՞ս կ'ուրբաւնէն ետքը սիրելի Լու-
սիային հետ յաջողութեամբ գերեզման-
նոցը մտնել ու գիշերուան լուսութեանը
մէջ իրենց նուիրական ուխտը կատա-
րել եւ թէ ինչպէ՞ս՝ այսօր ալ բաղ-
դին բերմամբ՝ յիշած էր երկու տար-
ուան վայրը մը...

— Իրա՛ւ, Աւազակապետ, ուրէ՞
Լուսիա... հարցուց Միւր Սիւպար
զոգողալով:

գիշերը կազմելու. կանոնագիրներ գը-
ծելու հոգը, ծրագիր ու կանոնագիր.
որոնք պիտի գործածուին Պուկարա-
հայ վարժարաններու մէջ եւ որոնց
բովանդակութեան համար Պուկարա-
հայ ժողովուրդը ոչ մի ձայն չ'ունեցաւ:

Թողուք այս ամենը. մենք կու-
գենք ծանրաստի գլխաւորաբար մէկ
կէտի վրայ. այն է ուսուցչական
պատուին ու վարկին բարձրացման
ծանր խնդիրը: Երկու խոսքով այս
հարցը լուծուած կարելի է համարել:
Անհատն ինքն է որ պիտի բարձրացնէ
այս ասպարեզը, Բազմաթիւ վատթար
արարքներով իւր պատիւը արատաւո-
րած՝ այլ եւ այլ զգուշելի վիճակի
մէջ գտնուած, ինչ ինչ մոլութիւններ
ու յոռի ընթացք ունեցող, անճարա-
կութեան, անընդունակութեան, ան-
գիտակցութեան, եւ այլ կարգի ու-
սուցչութիւնը վարկաբեկող յատկա-
յիշները կրող մէկը. որը լոկ փոքրն
համար կ'աշխատի եւ վարժարանին
դռներէն զգուշացնող կ'անցնի, ըսէք
խնդրեմ, ինչպէս յարգուի ժողովուր-
դէն եւ աշակերտներէն: Այսպիսի
մարդ մը տասը սենտեքականներու ալ ան-
գամ լինի, ասով ոչ իրեն ոչ սենտե-
կային պատիւը կը բարձրացնէ:

Յառնայնդէպ ընդունինք որ պատ-
ուաւոր, աշխատող, գիտակից ուսու-
ցիչ մը ամեն տեղ ուր որ ըլլայ կը
յարգուի ժողովուրդէն ու կը սիրուի
աշակերտներէն: Եւ ո՞վ է այն հոգա-
բարձուն որ կ'սրենայ այս յատկու-
թիւնները մարմնացնող ուսուցիչը
գործ հանել վարժարանէն, Այո՛ կը
հաւատանք որ հոգաբարձութիւնը այլ
եւ այլ շարժառիթներէ կամ ստիպումէ
զրդեալ գիտակցաբար վարժարան ըն-
դունի անպէտ մէկը, բայց այս շնչա-
նակեր թէ օգտակարներն ալ կը հա-
յածէ. այսպիսի անմտութիւն կամ յի-
մարութիւն սպասել հոգաբարձուե-
րէն. չ'ափազանց կը լինի:

Այն ուսուցիչը որ անպարտաճանաչ
ու անպատիւ է, ժողովուրդին յարգան-
քին արժա՛ն չ'է:

Մ.

ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Շատեր մեզ գիտել տուած են
թէ տեղւոյս եկեղեցւոյն մէջ
շրջագայող պնակներու շարքը
անտանելի դարձած է: Մենք
անգամ մըն ալ հետաքրքրուե-

— Լուսիա խումբի մը գլուխը կը
գտնուի, Միւր Սիւպար, պատասխա-
նեց Աւազակապետը: Դիչ ատենէն
պիտի տեսնուիք, անհոգ եղի՛ր:

— Ո՛հ, Աստուած առաջնորդէ՛ իր
քայլերը... ընդհատեց ծերունի նա-
ւավարը խորին յուզմունքով մը:

Նաւակը կը սուրբ ծովին բարդ
բարդ ալիքներուն մէջէն, ետին թող-
նելով Վանայ բերդին ա՛յն գեղեցիկ
տեսարանն, որ դարեւ ի վեր այդ երկ-
րին պարծանք եղած է:

— Գիտե՛ս. Միւր Սիւպար, ուր
կոնքեմ երթալ, նկատել տուաւ Աւա-
զակապետը:

— Ուր... հարցուց Միւր Սիւպար:

— Սա կ'ուրց Անապատը:

— Հիմա՞ն:

— Այո՛, հիմակ... կարելի չ'է:

— Ինչպէ՞ս կարելի չ'է... միայն
թէ...

— Ինչ կայ:

— Այդ հազուադէպ կասկածի տեղի
պիտի տայ:

ցանք այս կիրակի այդ պնակ-
ներով և հետեւալ բացատրու-
թիւնը ստացանք:

«Վանականներու գանձակէն
զատ պնակ մը կը շրջագայի ե-
կեղեցւոյն համար, պնակ մը
դպրոցին, պնակ մը էջմիածնայ,
պնակ մը աղքատախնամին հա-
մար. ասոնք սովորական պնակ-
ներ են որ ամեն կիրակի կը
պտըտցունեն. իսկ տաղալարնե-
րու առթիւ դպրոց դասու պնակ-
ըն ալ կայ, և աւելորդը միայն
այս է, քանի որ դպրոց դասը
երկու տարիէ ի վեր ո՛րէն ծախք
չ'է ըրած այդ նպատակաւ և ոչ
ալ հաշիւ տուած է թաղական
խորհուրդին»:

Ինչու, կը հարցունենք:

— Եկեղեցին միայն աղօթքի
տուն ըլլալով, կարգ մը աղօթա-
սէրներ կը դանգաժին թէ ի-
րենց աղօթքը կը խանգարուի
խօսակցութիւններու պատճառաւ:
Իրաւ է թէ այս գանգատը հին
էր կանանց վերնատունին հա-
մար, ուր ուհիներէ շատախօս-
ները իրենց լուացքը, բաղնիքը
և հագուստը ու կապուստը կը
հասկցնեն իրարու սրբազան ա-
րարողութեան ատեն, բայց
վերջին ատեններս սկսեւ են
երեւմն այրեր ալ մրցիլ այդ
տեսակետով կանանց հետ: Այս
կիրակի օր դարիկ և թեփի ա-
ռեւտուր մը կար տաճարին դա-
ւիթը: Այս առեւտուրական հե-
րոսները ինքզինքնին, կերակայ
թէ, արմուսաց սակարանը կար-
ծած էին. բարեբաղդաբար զի-
րենք սթափեցնող մը գտնուե-
ցաւ:

— Ասկէ երկու շաբաթ առաջ
եկեղեցւոյ փակը, պսակի մը ա-
րարողութենէն յետոյ, ծանօթ
մը գոհունակութեան ժպիտ մը
երեսը դիւ կը շնորհաւորէր ը-
սելով թէ, աչքերնիս լոյս, վեր-
ջապէս պսակի խորհրդագիրքը
փոխուեր է, Գեթ այս անգամ
ներկայ եղող օտարականներէն

— Ամենեւին:
— Հայ ըլլալդ չ'ի պիտի՞ յայտնես:
— Ո՛չ:

— Ան ատեն կը վստահիմ:
Ու ասորեք հարցում մը չ'ընելով,
մեքենաբար ոտքի ելաւ, առաջատ-
ներս ուղղեց եւ շուտով հասնելու հա-
մար, թիւփարել սկսաւ:

Կէս օրը ժամ մ'անցած՝ նաւակը մը-
տաւ կ'զգին նաւամատոյցը:

— Երբ Աւազակապետը ցամաքը ե-
լաւ՝ ցած ձայնով մըսաւ:

— Միւր Սիւպար, դուն մի՛ սպա-
սեր... գնա՛:

— Հապս՞ դուն, գոչեց Միւր Սիւ-
պար:

— Կարելի է վաղը կը վերադառնամ:
Ան այժմ մնաւ-բարո՞վ:

— Երթաւ-բարո՞վ, միջոցեց Միւր
Սիւպար ու հեռացուց նաւակը:

չամշտալ, ալս նոր գիրքը նորա-
կազմէ, իսկ առջինը, Աստուած
հիւր ընէ, աղտոտած, քերծուած
անկիւնները մուկը կերած վիճա-
կի մէջ Տէր Մարտիրոսի ձեռքէն
վար չէր իյնար մինչև որ խոր-
հուրդը աւարտէր. կը մաղթեմ
որ յաւիտենապէս հանգստեան
կոչուած ըլլալ այդ ծորած գիր-
քը. -նոյն հաղթանակը մաղթեմ
ըսի Տէր Մարտիրոսի անտա-
նելի ձայնին ալ:

ՀԱՅ-ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ
ԻՆԻՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Երբ բռնակալները գէնքի ուժով նու-
աճում էին խաղաղ ազգութիւնները եւ
սարկութեան էին մասնում նրանց,
հոգեւորականները եւս աշխատում էին
իրանց բռնապետութիւնը հաստատել՝
ի չար գործածել հաստատեցանքի վս-
տահութիւնը: Այսպէս է եղել հեթա-
նոսութեան ժամանակ եւ այսպէս էլ
չարունակում է թրիստոնէութեան ժա-
մանակ: Հոգեւորականները, խօսելով
միշտ տիեզերքի տիրող անունին,
ձգտել են ներկայանալ ժողովուրդի
առաջ իրեն տիեզերքի երկրորդ տէ-
րեր: Ուրախալի բացառութիւններ
միշտ եղել են, բայց զրանք օգտի-
ներ են անապատում:

Այդ ընդհանուր հոգանքը վերցնում
է եւ հայ-կաթոլիկ հասարակութիւնը,
որի վրա հաստատվում են կրկնակի
բերօքրատ խնամակալներ, մինքնազ-
կացած լատինաւոր հայ հոգեւորական-
ներին, իսկ միւսը, աւելի անտանե-
լին եւ աւելի բռնապետական. — լա-
տին կղերականութիւններին:

Լատին կղերականութիւնը դարերի
ընթացքում շարունակել է իր մէքե-
նայութիւններով խառնել հայ-կա-
թոլիկ հասարակութեան ներքին գոր-
ծերում եւ հաստատել իր բոյնը այդ-
տեղ: Վերջապէս աշոգվել է այդ ինք-
նակոչ հիւրին ինքնիշխան կերպով կա-
ռավարել մեր տան տերքին գործերը:
Իսկ հայ-կաթոլիկ եկեղեցին եղել է
այդ օտարների ձեռքում իրիւս մի
կոյր զանգուած, իբրեւ մի տղայա-
կան խաղալիք, առանց կամքի, ա-
ռանց իրաւունքի: Ամօթ է ասել, որ
այսօր եւս, չը նայած հայ-կաթոլիկ
հասարակութեան ինքնաձայնութեան

չը նայած ժամանակից ազատադրական
շարժումներին, լատին կղերականու-
թիւնը վարում է իր ինքնագոյն իշ-
խանութիւնը հայ-կաթոլիկ եկեղեցու
գործերի նկատմամբ եւ հաստատ կամք
ունի այդպէս էլ շարունակելու ան-
վերջ. իրան յատուկ քաղաքականու-
թեամբ:

Բռնադատել մի հասարակութեան
դարերով սրբագործուած իրաւունքնե-
րը, — այդ ամենամեծ ոճիր է, որ
գաղափարային միտքը միայն ընդունակ
է հնարելու: Ուրեմն ինչով բացառ-
ել լատին կղերականութեան այդ
կերպ վարմանը:

Ճաշակել այն է, որ լատինների այդ
բարբարոսական եւ ազգակործան ար-
շտանքին սկզբից նպաստել է հայ-
կաթոլիկ հոգեւորականները մի մասը
եւ մինչեւ այսօր շարունակում է այդ
աշխատութիւնը: Սակայն ինչ անուն
տալ այն հայ հոգեւորականին, որ
այդպէս դաւաճանում է ազգային-եկե-
ղեցական իրաւունքներին, ձեռք ձեռքի
տուած լատինների հետ:

Անթիւ են անցնելու եւ ներկայի
այն ցաւալի դէպքերը, որ տեղի են
ունեցել հայ-կաթոլիկ հասարակու-
թեան մէջ շնորհիւ այն հանգամանքի,
որ օտար տարրը, այսինքն լատիններն
են իշխել ինքնագոյնիս, իսկ ժողո-
վուրդը եղել է նրանց ձեռքում մի
ստրուկ: Լատինների եռանդուն գոր-
ծունէութիւնը հասել է նոյնիսկ այն
աստիճանի, որ տեղ-տեղ աշոգվել է
նրանց սպանել հայութիւնը հայ սրտե-
րի մէջ:

Լրագրական սինակները չեն ների,
որ այստեղ յիշեմ միառաի բոլոր ցա-
ւալի դէպքերը: Միայն չնշուած եմ
հետեւեալը, որը մեզ ամենամերձա-
ւորն է: Կովկասի հայ-կաթոլիկ հա-
սարակութիւնը, ցանկանալով ազատ-
վել լատին կղերականութեան բերօք-
րատական իշխանութիւնից, զանազան
դիմումներ է արել իր համար Կովկաս-
ում հոգեւոր իշխանութիւն հաստատե-
լու համար: Ռուս կառավարութիւնը,
իրաւացի գտնելով այդ պահանջը, 1893
եւ 1903 թւականներին հրատարակում
է կարգադրութիւններ, որոնցով թոյլ
է տրվել ունենալ հոգեւոր իշխանու-
թիւն: Առաջին կարգադրութիւնից
անս անցել է 13 տարի, եւ այդ իշ-
խանութիւնը գեռ գոյոթիւն չունի:
Միակ պատճառն այն է, որ լատին
կղերականութիւնը որոշել է խանգա-
րել այդ գործը եւ կամ այդ իշխանու-
թեան գլուխ նշանակել այն անձնա-

ւորութիւնը, որը պիտի ծառայէ աւե-
լի լատին բերօքրատիայի նպատակին.
քան հասարակութեան ճշմարիտ կ-
րթներին: Ժողովուրդեան ուզած հոգե-
ւորականներին Սարադովի լատին ե-
պիսկոպոսը, մի ժամանակ բարձր Բոս-
պը եւ այժմ Կեսերը, միշտ ձեռք
է ի խոր խոցելով հասարակութեան
սիրտը: Եթէ կախում չունենայինք
լատին կղերականութիւնից, տարա-
կոյս չը կայ, որ մինչեւ հիմայ հայ-
կաթոլիկ հասարակութիւնը պիտի ու-
նենար Կովկասում իր համար եպիսկո-
պոս, հոգեւոր իշխանութիւն եւ սեմե-
նարիա:

Այո՛, ցաւալի է անցնալը եւ ներ-
կան, բայց աւելի ցաւալի պիտի լի-
նի ապագան, եթէ հայ-կաթոլիկ հա-
սարակութիւնը իր բուն ուժով չը
դիմագրէ լատինների մաքառումներին
եւ չը պահանջէ, որ իր ազգային-ե-
կեղեցական կորած իրաւունքները վե-
րականգնեն:

Ստրուկ լինել, եւ այն էլ օտարնե-
րի ձեռքում, ամենավերաւորական է
գիտակից հասարակութեան, գիտակից
անձնաւորութեան համար: Բայց շա-
րունակել ստրուկ մնալ երբ կարելի է
ազատ լինել, այդ ամենամեծ ստրուկ-
ութիւն է, ամենամեծ վատութիւն է:
Ժամանակ է, որ հայ-կաթոլիկ հասա-
րակութիւնը պահանջէ իր եկեղեցա-
կան գործերի շրջանում ինքնավարու-
թիւն, անկախութիւն այդ օտարներից
որոնք հեռու են սեզանից թէ լեզուով,
թէ բարքով թէ ծէսով, եւ նոյնիսկ
զգացումներով:

Օրինակ վերցնենք մեր դրացի վրա-
ցիներից, որոնք անխնայ կերպով աշ-
խատում են ձեռք բերել եկեղեցական
ինքնավարութիւն, չը նայած որ նը-
րանց իրաւունքները պէտք է կորզել
աւելի զօրեղ ճիւղաններից:

Լատին բերօքրատ կղերականների
խնամակալութիւնը այլեւս գոյութեան
իրաւունք չունի, ներկայ դարը
բերօքրատների եւ ինքնակոչ խնամա-
կալների դար չէ: Հարկաւոր է որ
ժողովուրդը ինքը անձամբ հոգայ իր
կարբքները, ինքը անձամբ ընտրէ իր
եկեղեցական պաշտօնականներին: Ընտրու-
ղական սկզբունքը արդէն միշտ
գոյոթիւն ունեցել է մեր մէջ, այն-
պէս որ հասարակութիւնը ունի թէ
պատմական եւ թէ կանոնական իրա-
ւունք ինքը ընտրելու հոգեւորական-
ների եկեղեցական պաշտօնների համար
եւ ինքը հեռացնելու: Հարկաւոր է
միայն կորած իրաւունքները յետ պա-

հանջել եւ աւելի բնորոշել: Անհրա-
ժեշտ է պահանջել եկեղեցական
ինքնավարութիւն, անհրաժեշտ է ունե-
ւել ազատ եկեղեցի, լինել ազատ հա-
սարակութիւն:
(Մշակ) Հայ կաթոլիկ

ԱՐԵՒԵԼԷ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ մեր տպարանին ՀԱ-
ՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԴՐԱՅԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
մեծագոր լատար 1—1, 25) քարտէզը
ԱՐԵՒԵԼԷՔ փերագրի տակ: Այս քար-
տէզը յատկապէս պատրաստուած է
ազգային վարժարաններու եւ վաճառս-
կանական գրասենեակներու համար:
Մասնաւոր խնամք տարուած է տպագ-
րութեան մաքրութեան եւ տառերու
յստակութեան: Եթէ զանազան գոյ-
ներով կ'որոշուին բոլոր դրացի տէ-
րութեանց երկրները: Բարտէզին մէկ
անկիւնը կայ նաեւ Կ. Պոլսի մասնա-
կան քարտէզը. իսկ հարաւորողմը
զանազան սինակաց մէջ դրուած են
օգտակար վիճակագրական տեղեկու-
թիւններ:

Գինն է ֆր. 5— որ. 2 տոլ. 1:
Մեր հաւցէն է
Հայկական տպարան
Ս. Ղանար Վենետիկ (Խալաթա)

ՇԵՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Վառնայի Հայկական ընթերցարանի
Վարչութիւնը ստացու ընթերցարանիս
համար Տիար Պորէն Որիմեանէ քառա-
սուն երեք կտոր գիրք. որ ազգասի-
րաբար նուիրած է:

Նոյնպէս Տիար Ս. Բրիտտիօրիան
բարհաճած է մի քանի գրքեր նուիրել
ընթերցարանիս:

Վարչութիւնը կուգայ սոյն երկու
բարեւէրներու իր խորին շնորհակալու-
թիւնը յայտնելու:

Ի Դիմաց

Վարչութեան Հայկական ընթերցարա-
նի:

Ատենատպիր Վ. Ատենապետի
Արայ Գալստիսեան Կ. Մանտիկեան
14 Օգոստոս 1906 Վ.Ա.Ն.Ա.

ՍԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Աթէնքի Թաղ խորհուրդէն
ստացուած պաշտօնական նամակ
մը կը հերքէ ու բոլորովին անհի-
մն կը հռչակէ այն լուրը թէ
Բիրէայի կամ Աթէնքի Յոյները
տեղույն հայ խանութները կո-
ղտատած կամ աւերած ըլլան:

(Շարունակելի)

ՄԱՆԹԸ

Աւազակապետը, չորս գին պը-
տըտուելով իր աչքերը, կամաց
կամաց մօտեցաւ իրենց երեւ մեծ դու-
ռին քով եւ նստեցաւ:

Ամբողջ ժամ մ'անցաւ, բայց մէկը
չը տեսնուեցաւ: Բոլոր կողմին խոր
լուծեան մը մէջ թաղուած էր:

— Տէր Աստուած... արդեօք մարդ
չը բնակիր այս կողմին մէջ, մըմնից
Աւազակապետն ինքնիշխան:

Բայց հազիւ թէ խօսքն աւարտած
էր, ահա՛ թխագոյն վերարկու մը հա-
գած, հաստ գգիւնակ մը դրած, կար-
ճահասակ եւ խիտ ու սեւ մօրուքով
մարդ մը դուրս ելաւ մեծ դուռէն:

Վտնքին մարդը կեցաւ, ապուշ
նայուածք մը նետեց Աւազակապետին
վրայ ու ներս գնաց:

Բիշ յետոյ, բարձր հասակով, գե-
րուկ, թաւ ու լայն մօրուքով, ծաղ-
կաւեր կերպարանքով կրօնաւոր մը

մօտեցաւ Աւազակապետին ու հար-
ցուց.

— Ի՞նչ սոգ ես:

Բայց երբ տեսաւ որ Հայերէն չ'էր
հասկնար ու ապուշի մը պէս իրեն կը
նայէր, ան ասեւ թուրքերէն լեզուով
մը հարցուց. «Ի՞նչ սոգ ես...»:

— Ե՛ս... մըմնից Աւազակապետը՝
կատարեալ պաղարիւնութեամբ մը:

— Այո՛:

— Ես ֆաքիր մընեմ:

— Ֆաքիր... —

— Ժիշտ է:

— Լա՛ւ ի՞նչ ընելու եկած ես հոս:

— Կը թափառիմ...

Կրօնաւորը տարօրինակ նայուածք
մը նետեց արեւին դէմ կէս մը փուռած
վիճակի մը մէջ երկնցող ֆաքիրին
վրայ, ու շարունակեալ գիտեց ու գի-
տի աղաւթի շարժում մ'ընելով, շա-
րունակեց:

— Բայց, բարեկա՛մս, հոս վանք
մընէ... ֆաքիր մը մարդերու մէջ կը

թափառի:

— Կը սխալի՞ք... ֆաքիր մ'ամեն
տեղ կրնայ մտնել, առարկեց Աւա-
զակապետը: Հոս աղօթատեղի մըն է...

— Ֆաքիր մը կրնայ աղօթել:

— Մահմետական մը չ'են... —

— Ի՞նչ կրկնայ... միթէ՞ Մահմե-
տական մը պէտք չ'ունենար Աստուծոյ
տուններու մէջ աղօթելու:

— Ժիշտէ, Բայց Մահմետականները
յատուկ աղօթատեղիներ ունին... ա-
նոնք մեր եկեղեցիներու մէջ չ'են ա-
ղօթեր:

— Սա՛ պէտք է գիտնալ որ ֆաքիր
մ'այսպէս չըմտածեր... տառակ նեղ
հայեացքներ չ'ունի: Ֆաքիր մը կրօն-
քը սահմանափակուած չ'է... անոր ի-
մաստասիրութիւնը լայն է. ազատ ու
անկաշկանդ է:

Կրօնաւորը յափշտակուած էր: Կը
զգար թէ դէմը գտնուողը բարձր գա-
ղափարի տէր մէկն էր, կը զգար թէ
այդ մահմետականի տարազը կրող ֆա-

քիրը հասարակ տէվրիներուն չէր նը-
մաներ...

— Ի՞նչէ՞ ձեր անունը, հարցուց կը-
րօնաւորն այս անգամ խորին յարգան-
քով մը:

— Անու՛նս, բացազանչեց Աւազա-

կապետը:

— Այո՛:

— Ֆաքիր է:

— Ուրիշ անուն մը չ'ունի՞ք:

— Ո՛չ:

— Ո՞ր երկրէն էք:

— Պարսկաստանէն:

Կը փափաքի՞ք միասին պոռոյտ
մ'ընել, մըմնից կրօնաւորը:

— Ամենա՛յն սիրով, պատասխանեց
Աւազակապետն ու միջնաբար ոտքի
եկաւ:

ԲԵՃԱ

Սէնէի հալիյէնին սէքիզինճի ալընտա պուլընտըղըմը խիւա-
ֆընա օլարագ՝ ապօնէլէրիմիզին
պիր գըսմը՝ պա խուսուս քէօլէր-
տէ պուլունանլար՝ էլան կաղէ-
թամըղըն պէտէլինի էօտէմէմիշ
տիրէր։ Պիր կալէթանըն նէշրի
իշիւն պիւթիւն մէսարիֆէր բէ-
շին բարա իլէ օլտըղընտան՝
կաղէթա պէտէլի տախի տիւն-
եանըն հէր պիր թարաֆընտա
բէշին էօտէնիլմէքտէ՝ իքէն, պի-
ղի՛ պու անա գատար պէքէմէ-
միզի հէօրմէթիւ ապօնէլէրիմիզ
քեաֆի ատտ իտէրէք՝ զայրը
պիւա թէէլիւր պօրճլարընը
կէօնտէրմէլի տիրէր։

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Կէշէն ճուսա կիւնիւ Սուլ-
թան Համիտին թէքար Սէլամ-
լըր րէսմինտէ պուլունտըղը ըՍ-
թանպօլտան պիւտիլիմիշ տիր։

— Էրմէնի մաթպուլթըն սան-
սուր մէմուրը Մինաս Էֆ. միւ-
լէթաաշարընըն բրօթէսթի իւ-
զէրինէ հապ օլընմը։

— Շու կիւնէրտէ նիզամը
բասարթ էլլէրինտէ խարիճ-
տէն Սթանպօլա կիտէն էրմէնի-
լէր վէ Պուկարլար՝ հէր քիմտէ
օլսալար՝ կէրի շէվիրիլիօրլար։
զիրա Սուլթանըն թախթա ճիւ-
լիւսի կիւնիւ եագըն (օգոստոս 19)
օլտըղընտան հիւքիւմէթ իխթի-
լալտան գօրգար ըմը։

— Սթանպօլտան Վիէնայա
պիւտիլիմիշի իւզրէ, կէօեա՝
բուս գարըրզըղը սէպէպի իլէ
Պասըր Ալի վէ Պուկարիա պէյ-
նինսէ կէրկինիկ հասըլ օլտը-
ղընտան նաշի պուլկար գապի-
նէսի տիւշէճէք իմիշ։

— Ալպանիտա թէքար Ար-
նափուտլար ըսեան իթմիշէր,
Պու րսօնան վէրկիլէր սէպէպ
խութուլիօր։ Աճէլէ սուրէթտէ
առքէ՝ Եօլանըլմըն տըր։ Արնա-
փուտլարըն պու տէֆա առքէրէ
գարշըր գօյաեաճագլարը Սթան-
պօլտա իւմիւս օլընիօր։

Ալպանիտա կէշէն-
լէր իշիւն Սթանպօլտա 4 կիւն
գարսնթիւն թախիս օլընտը։

ՏԱԽԻԼԻԷ

Վ. Բօշթա կաղէթաընըն իշարը
իողրէ պուլկար վէ րուս հիւքիւ-
մէթիւրի պէյնիլտէ միւնասէպաթ
կէրկինիլէմիշ տիր, զիրա րուս
իխթիլալըլարըն մէնֆաթընա
Սօֆիատա եարըլաճագ օլան պիր
գօնֆէրանը րուս գօնսօլտը մէնն
իթտիւրմէք իսթէմիշ իտի, ֆա-
թաթ պուլկար խարիճիէ նաղըրը
Պ. Բէթրոլ ճէվապէն՝ գանուըն

էսասի իլէ իտարէ՝ օլընալ-սնէկ
խարիտա էօլլէ սանսուր մու-
մէլէսի օլընամաճաղընը պիւտիլ-
միշ։ Պու ճէվապը րէտտ իւզէրինէ
գօնսօլտա Բէթէսպուրկտան թա-
լիմաթ իսթէմիշ վէ րուս խարի-
ճիլէ նաղըրը գօնսօլտըն պուլկար
հիւքիւմէթի իլէ միւնասէպաթը
սիյասիլէսիլի գաթ իթմէկ իշիւն
սօն պիր էմիրնամէ կէօնտէրմիշ
օլտըղը «Բօշթաբազիօր»

— Բուսնուգտա նէշր օլընան
«Թունա» նամ թիւրք կաղէթա-
սընտա «Իւլֆէթ» հէգեաննամէ-
սինտէն իգթպա օլընմուշէրմէ-
նիլէր» սէրլէվալը պիր պէնտ
կէօրիւնտիւ պէնտին թու-
նա կաղէթասընտա կէօյիւլէ-
ճէկիւնի աւալ մէմուլ իթմէկ ի-
տիգ, էկէր պիր տըգգաթսըղըլա
պինտէն տէրճ օլընմըն տէկիւ
իսէ, պիւ թուանըն մուհարրիւրի
տախի նիգեապը եըրթըլմըն պիր
իգպալթէրէթ միւթէսուպ օլ-
տըղըն գանաթ հասըլ իտէճէ-
յիլ։

— Տախիլիլէ նաղըրը Մ. Բէթ-
քոլ պիւթիւն Ուբրալիթէլլէրէ
շու մաալտա էմիրնամէլէր Եօլ-
լամըն տըր։ «Ալտըղըմըլ խա-
պէրլէրէ նաղարէն» պաղը Եէր-
լէրտէ գօմիթէթլէր թէշքիւ օ-
լընուպ, Մաքէթոնիտա Բուս-
լարտան զարարտիտէ օլանլարա
ճէպրէն իանէ թօրլանըլմագտա
ըմը, պէօլլէ պիր ճէպրի հա-
րէքէթ վաթանրէրլէրիք խրտ-
մէթիւնի ֆէնա գուլլանմագ տէ-
մէք օլտըղընտան, օ՝ կիպիլէրին
մէննի իշիւն շէտիտ թէտպիլէր
էլէ ալընմասընը վէ միւթէճա-
սըրլարըն մուհաքէմէյէ վէրիւ-
մէսինի էմր իտէրիմ։ Հիւքիւ-
մէթ Մաքէթոնիտա զարարտի-
տէ օլանլարա եարտըլ իշին միւ-
նասիպ թարիգ թուլթաճագ տըր։
Մէքքիւր քոմիթէթլէր քէօլլէր-
տէ վէ սայիր միլլէթտէն պու-
լունանլարտան տախի թօրլա-
մագտա օլտըղընտան տէվ-
լէթլէր նաղարընտա Պուկարիա-
նըն թէվէտուհընը զայպ իթ-
տիլիլէր, Գէօյ միւտիլէրինէ
տախի պիւտիլէսինիլ։

— Սթանպօլտաքի պուլկար
մասլահաթիւլարը Մ. Նաշօլիշ
իսթիֆա իթմիշ օլուպ, պիր գաշ
կիւնտէն Սօֆիայա ալտէթ իւ-
ճէք իմիշ։

— Ֆիլիպէտէքի պէօյիք մի-
թիւնիւն գարարլարը տախիլիլէ
նաղըրը Մ. Բէթրոլ թաթտիմ
օլընմասընտա, եագընտա օլ
գարարլարըն իճրասընա չալը-
շաճաղընը վատ իթմիշ։ Մէքքիւր
գարարլարը կէօթիւրէն գօմիսին
մէարիֆ նաղըրը իլի տախի
կէօրիւնտէք՝ իպթիտաի մէք-
թէպլէրտէ (նախակրթարան)
տէրլէրին ումուլմէն պուլկարճա
վէրիլմէսինի իտտաա իթմիշ տիր-
նաղըր Շիշմանըլ պու ֆիքրէ
հէմէֆթեար օլտըղընը վէ հիլէթի

վիւքէլայա արզլէ անըն գապուլ
օլընմասընա չալըշաճաղընը վատ
իթմիշ տիր, Եանի պուլկար
մէքթէպլէրինտէն մաատա րուս,
թիւրք վէ պէլթիտէ էրմէնի
մէքթէպլէրտէ տախի եալընըլ
պուլկարճա օգուտուլմասը էմր
օլընմաճագ։ Բլէվէ տէվրի Բու-
սիտտան Պուլկարիայա մը՝ նագլ
օլընիօր։ Նէ՝ օլիօրըլ։ Եանա-
լալըմ։

ՐՈՒՍԻԱ

Վիւքէլա րէյիսի Մ. Սթօլէրին
սէյֆիլէսինէ պիր ֆայթօնիլէ
իքի սիվիլ վէ իքի էճնէպիզապի-
թի գըլաֆէթիւն տէօրտ ատամ
կիտուպ սալօնա կիրմէլէրինտէ
զայթ տէհէթլի սուրէթտէ պիր
պօմպա բաթլատըրլար։ պօմպա
զապիթ գըլաֆէթիւնտէ օլան
ատամըն պաշընտա պուլունըր
ըմըն բաթլայան պօմպա թէէսիլի
իլէ սալօնա եագըն օտտա պու-
լունանլար էօլմիւշէր։ միւնիս-
թէրին գըղը վէ օլու իւթ
գաթտա պուլունմաղլէ ալաղլարը
գըրըլմըն, եալընըլ Սթօլիլէրինէ
պիր շէյ օլմամըն սէյֆիլէսին
արգա թարաֆը պիւթիւն եանմըն
22 քիշի էօլմիւշ վէ 28 եարէլէն-
միշ մէքքիւր սուլ գաթ իտէն-
լէրտէն տախի իւշիւ էօլմիւշ վէ
պիրի աղըրճա եարէլէնմիշ տիր։

— Սէմէնօքոլ ալալըն՝ զգօման-
տանը ժէնէրալ Մին զէվէճէսի իլէ
Բէթէրնոլ կարասընտա պուլըն-
տըլը, էնանտէ՝ պիր կէնճ
գըղ պէշ ըվօլլէր սարպէլէրի
իլէ անր էօլտիւրտիւ Մատալ Մին
գաթիլէնիլ էլինտէն թուլթագլէ
անր տէրտէսթ իթտիտի։ Օրա-
տա պիր պօմպա տախի պուլըն-
մուշ տիր։

ՄՐԱՀ ՍԱԼԵՏԻՆԻԷ

Վառնայի հայ երիտասարդ, Թա-
տերասիրաց «ՄԱՍԻՍ» խումբը յա-
ռաջիկայ Օգոստ. 19ը չարաթ գի-
շեր պիտի ներկայացնէ, ի նպաստ

ՎԱՍՊՈՒԱԿՐՍՆԻ ԿԱՐՈՏԵԼՈՑ

Առաջին անգամ ըլլալով

ԱՐՇԱԿ Բ.

Ողբերգորթիւն 5 արար. անմահն Պէ-
շիկթաշիւանի հեղինակութիւնը ներկէն,
Ողբերգութենէ վերջ նաեւ խիւս ծի-
ծաղաշարժ գալիշ մը պիտի ներկա-
յացուի հայերէն լեզուաւ։

Վարչութիւն

«ՄԱՍԻՍ» թատերախմբի

ԸՆՏԻՐ ՊԱՆԻՐ

Պալգանի ընտիր գաշկալալ
գնել ուղղը վաճառականք թող
գիմեն Սօֆիա Տ. Գրիգոր Կարա-
պետեանի, որ իր սեփական պա-
նիրի-գործարաններուն (մանտ-
րա) մէջ խնամքով պատրաստել
տուած է ապրանքը մեծաքանակ
գնսդներու միայն կը ծախէ։ Իր
քով կը գտնուին նաեւ եւելը ե
աղջուրի պանիր (սալամուրա)։

ՄՇԱԿ

Օրաթերթ քաղաքական, գրական

Բաժնեգիր՝ Եւրոպայի համար 30 ֆր.
Ամերիկայի համար 6 տոլար, Պարսկաս-
տանի եւ Ռուսաստանի համար 10 ռուպ-
լի տարեկան։
Հասցէ՝ Խնդագ-ուրիւն «ՄՇԱԿ»-ի
(Կովկաս) Թիֆլիս

Одговорникъ А. Курбетянъ

печатница Д. Тодоровъ С.-не-Врша



ՅԱԿՈԲ ԹՕՍՊԵՐԵԿԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՎԱՌՆԱ

Բարիգու, Ժընէվի եւ Պառլէմէնթիւնիւն մէջ մեծագոյն պարգևներ
ստացող ու համաշխարային գնահատման բարձրագոյն արժանացող այս ժամա-
ցոյցի գործարանը «ՕՄԵԳԱ» իրօք իր անունը արդարացուցած է իր ճարտա-
ւարու հետը կատարելագործութեանց վերջին աստիճանին ՕՄԵԳԱ ին հասցնող
հաստատութիւն մը։

Այս հռչակագրի Գործարանին ներկայացուցիչն է Տ. Յակոբ Թօսպըրեկեանի վա-
ճառատունը, որ կը գտնուի «ՕՄԵԳԱ» ժամացոյցներու բոլոր տեսակները, ոսկեայ,
արծաթեայ եւ պողպատեայ ամեն չափէ ու մեծութենէ, Գիւնեթը ԶԱՓԱԻՐՈՐ,

կը գտնուին նաեւ Պուլկարիոյ բոլոր կարեւոր ակնավաճառներու եւ ժամա-
գործներու քով։